*Պարոն/Տիկին* Գ. Սարգսյան *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող պարոն Ս. Աղինյանին*

*խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար*

*Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն*

*Ս. Աղինյան*

«22» 10 2024թ.

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Արթուր Սաֆարյան,
   - Արմեն Հունանյան,
   - Զարուհի Ստեփանյան:

**2.Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- Գլխավոր քարտուղար,
- հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ,
- միջազգային համագործակցության բաժնի պետ:

**3.Գործուղման վայրը և ժամկետները՝** Բոնն, Գերմանի, 2024 թվականի հոկտեմբերի 15-16-ը:

**4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցությունը կարգավորողների ցանցում (EaPeReg) գործող ռոումինգի հարցերով աշխատանքային խումբ և Գերմանիայի ցանցային դաշնային գործակալություն (BNetzA):

**5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** Անցկացնել EaPeReg ցանցի ռոումինգի հարցերով աշխատանքային խմբի (REWG) 14-րդ հանդիպումը և մասնակցել ՀՀ հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Գերմանիայի ցանցային դաշնային գործակալության (BNetzA) միջև կայանալիք երկկող հանդիպմանը:

**6.Քննարկված թեմաները (հարցերը)՝** Հանդիպման ընթացքում EaPeReg ցանցի ռոումինգի հարցերով աշխատանքային խմբի (REWG) նախագահողը՝ հանձնաժողովը, ներկայացրել է խմբի գործունեությունը 2024 թվականի ապրիլի 29-30-ը Չեխիայի Պրահա քաղաքում կայացած 13-րդ հանդիպումից ի վեր:

Մասնավորապես, հանդիպման ընթացքում նշվել է, որ Ռոումինգի տարածաշրջանային համաձայնագիրի (RRA, այսուհետ՝ Համաձայնգիր) ստորագրման հետաձգվում է՝ տարածաշրջանում տիրող իրավիճակով պայմանավորված, ուստի աշխատանքային խմբի անդամների կողմից որոշում էր ընդունվել, որ Համաձայնագիրով նախատեսված միջազգային ռոումինգ ծառայությունների առավելագույն մեծածախ միջին վճարների չափերը պետք է ուժի մեջ մտնեն 2026 թվականի հունվարի 1-ից՝ համաձայնագրով ի սկզբանե նախատեսված միջազգային ռոումինգ ծառայությունների առավելագույն մանրածախ միջին վճարի հաշվարկի և դրույքաչափերի համաձայն:

Գործընթացի շրջանակում Ուկրաինական կողմը առաջադրել էր երկու պայման Եվրոպական միությանը, մասնավորապես.

1. Համաձայնագիրը պետք է ուժի մեջ մտնի Ուկրաինայում ռազմական դրության մասին օրենքի վերացումից 6 ամիս հետո,
2. ԵՄ արևելյան գործընկերության երկրների միջև կնքվող Համաձայնագիրը չպետք է խոչընդոտի միջազգային ռոումինգ ծառայությունների վերաբերյալ Ուկրաինայի և ԵՄ-ի միջև երկկողմ բանակցություններին:

Այս առնչությամբ Եվրոպական միությունը ներկայացրել է իր պաշտոնական պարզաբանումը սույն թվականի մարտի 5-ին և ներկայումս ակնկալում է Ուկրաինայի պաշտոնական դիրքորոշումը Համաձայնագրի ստորագրման մասով:

Հանդիպման ընթացքում Հայաստանի Հանրապետության, Մոլդովայի, Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները վերահաստատել են իրենց հանձնառությունը ստորագրելու Համաձայնագիրը, սակայն Ուկրաինայի ներկայացուցիչները մինչ հանդիպումը ներկայացրել էին իրենց դիրքորոշումը առ այն, որ Ուկրաինայի պետական մարմինները դեռևս ունեն որոշակի առարկություններ, որոնք հիմնականում վերաբերում են Ռուսաստանի Դաշնությունում գրանցված և ԵՄ արևելյան գործընկերության երկրներում գործող օպերատորներին, ինչպես նաև Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ժամկետներին:

2023 թվականին ՀԾԿՀ-ն և Վրաստանի հեռահաղորդակցության հանձնաժողովը բարձրացրել էին ԵՄ ԱԼԳ երկրներում ձայնային հեռախոսազանգերի վերջնավորման մեծածախ շուկայի վերլուծության անհրաժեշտության հարցը, ինչը քննարկվել էր EaPeReg ղեկավարության կողմից և այդ գործառույթը վերապահվել է ռոումինգի հարցերով աշխատանքային խմբին (REWG):

Այս կապակցությամբ, EU4Digital նախաձեռնության փորձագետները նախապատրաստել են ձայնային զանգերի վերջնավորման մեծածախ շուկայի վերլուծության ձևաթուղթը, որի մասով որոշում է ընդունվել մինչև սույն թվականի նոյեմբերի 15-ը ներկայացնել լրացված տարբերակը EU4Digital նախաձեռնության փորձագետներին՝ հետագա վերլուծության նպատակով:

Միջոցառման ընթացքում Գերմանիայի դաշնային կարգավորող (BNetzA) ներկայացուցիչը՝ REWG փոխնախագահողը ներկայացրեց նաև ԵՄ Roam Like At Home (RLAH) շրջանակի մոտարկամն առանձնահակությունները:

Հաշվի առնելով, որ EU4Digital նախաձեռնության շրջանակում հավաքագրվում են տարբեր տվյալները, որոնց ճշգրտումը ԵՄ ԱԼԳ երկրները բավական է պահանջում, մասնակիցների կողմից հարց բարձրացվեց տվյալների հավաքագրման գործիքի և համակարգերի վերաբերյալ: Այս կապակցությամբ EU4Digital նախաձեռնության փորձագետները նշեցին, որ ԵՄ համապատասխան հետաքրքրության հայտ ուղարկելուց հետո հնարավոր է իրականացնել նման գործիքի քննարկման և մշակման աշխատանքները: Նկատի ունենալով վերոնշյալը REWG ղեկավարությունը կքննարկի առաջարկը և նպատակահարմարության դեպքում կներկայացնի համապատասխան հայտը ԵՄ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Գերմանիայի ցանցային դաշնային գործակալության (BNetzA) միջև կայացած երկկողմ հանդիպման ընթացքում BnetzA աշխատակիցները ներկայացրել են BnetzA ինտիտուցիոնալ կառուցվածքը, որը շատ յուրահատուկ է և տարբերվում է ԵՄ այլ կարգավորող մարմինների կառուցվածքից: BnetzA-ն բացի նախագահի և երկու փոխնախագահի պաշտոնից ունի նաև կարգավորող մարմիններ, որոնք ստեղծվում են ըստ այդ ժամանակահատված առկա հարցերի: Յուրաքանչյուր կարգավորող մարմնում գործում է 3-5 հոգի, որոնք կոլլեգիալության սկզբունքով ընդունում են որոշումներ: Ներկայացվեցին նաև բյուջեի ձևավորման առանձնահատկությունները:

Քննարկվեց նաև հանձնաժողովի անդամակցությունը Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդին (CEER): Նշվեց, որ թերևս վերջնական որոշումը դեռևս չի կայացվել, սակայն կան որոշակի հանգամանքներ, ինչպիսիք են այն, որ Հայաստանը չի հանդիսանում Էներգետիկ համայնքի (Energy Community) պայմանագրային կողմ, ինչպես նաև կարգավորող մարմնի անկախության մակարդակը, որոնք ազդեցություն կունենան վերջնական որոշման ընդունման վրա:

**8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝** Հանդիպման արդյունքներից ելնելով՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համատեղ աշխատանքները Ուկրաինայի ներկայացուցիչների հետ՝ իրենց կողմից առաջադրված աարկությունների քննարկման նպատակով:

Միևնույն ժամանակ, ԵՄ ԱԼԳ երկրների ներկայացուցիչները մինչև սույն թվականի նբոյեմբերի 15-ը կլրացնեն EU4Digital նախաձեռնության փորձագետների կողմից նախապատրաստված ձայնային զանգերի վերջնավորման մեծածախ շուկայի վերլուծության ձևաթուղթը և կներկայացնեն իրենց դիրքրոշումը, որից հետ կքննարկվեն վերլուծության համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման ժամկետները:

**9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝** Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն նախատեսվում է՝ որպես EaPeReg ցանցում գործող ռոումինգի հարցերով աշխատանքային խմբերի նախագահող, շարունակել աշխատանքները և համագործակցությունը EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ խմբի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով, ինչպես նաև քննարկել աշխատանքային խմբի անդամների հետ հետագա գործունեությունը:

Հաշվի առնելով, որ հանդիպման ժամանակ քննարկված ժամկետները՝ առաջարկում ենք լրացնել EU4Digital նախաձեռնության փորձագետների կողմից նախապատրաստված ձայնային զանգերի վերջնավորման մեծածախ շուկայի վերլուծության ձևաթուղթը և ներկայացնել EU4Digital նախաձեռնության փորձագետներին :

*Գործուղվող* ---------- 22.10.24թ ***Ա. Սաֆարյան***

*(ստորագրությունը, ամսաթիվը)*

Գործուղվող ---------- 2024թ. 22.10 **Ա. Հունանյան**

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 22.10.2024թ. **Հ. Ստեփանյան**

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը
Հրաման 1133-ԳՔ 24.10.24, Հրաման 1136-ՀՆ 24.10.24

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի գլխավոր քարտուղար՝ **Արթուր Սաֆարյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի պետ՝ **Արմեն Հունանյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ՝ **Զարուհի Ստեփանյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Բոնն / Գերմանիա /**

5. Գործուղման ժամկետները հոկտեմբերի **14.10.24-17.10.24թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ /1օր/**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, **գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | Արթուր Սաֆարյան | Արմեն Հունանյան | Զարուհի Ստեփանյան | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| Ճանապար-հածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | | | | - |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | | | | - |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո) | | | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | | | |
| | Օրերի քանակը | 1 | 1 | 1 | |
| | Ընդամենը (դրամ) | 72,619 | 74,802 | 73,996 | 221.417 |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո) | 112 | 112 | 112 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 47,876 | 47,876 | 47,876 | |
| | Օրերի քանակը | 4 | 4 | 4 | |
| | Ընդամենը (դրամ) | 191,502 | 191,502 | 191,502 | 574.506 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | | | - |
| | Այլ ծախսեր (*նկարագրել*) | | | | |
| **Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)** | | 264.121 | 266.304 | 265.498 | 795.923 |

**Գլխավոր ֆինանսիստի**

***(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)***

Ամսաթիվ 24.10.2024թ.